

հայ լեզուն անատակ պիտի դառնայ նոր բարդութեանց ու բարզաւաճման, որոյ համար անհրաժեշտ է կազմախօսական գիտութիւնը:

Եւրոպական օգիրն ընդունուեր է միջին դարուն, փոխանակելու համար հին սեր, որ այդ շրջանին օր ձայնն առած էր: Եւ այդ էր իւր միակ պաշտօնը. այնպէս որ մեք զայն տեսնելով «Օր, ընտանեօք, արդեօք» և այլ բառերու մէջ, իսկոյն կը յիշենք աղոնց հնագոյն ձեւերը, «սեր, ընտանեւաւը, արդեւաւը»: Իսկ մեր արդի տգէտ գիտնականները զայն կը գործածէին նաև եւրոպական օրն դէմ փոխանակելի: Երևանեան ուղղագրութիւնն այդ զեղծման առաջին առաւ ուրիշ զեղծմամբ մը, ընդհանրացնելով յի գործածութիւնը, և իսպառ ջնջելով օ տառը: Բայց այս երկրորդ զեղծման ալ չի ներքի լեզուագիտութիւնը, որ կ'որոնէ լեզուական ձևերու ծագումը: Երբ կը տեսնենք «օր և սեր» բառերը, կ'ըսենք. օրին մէջ փակուած աւն է՝ որ կը բացուի ստոր սեռականին մէջ: Սակայն երբ տեսնենք երևանեան որ գրութիւնը (փոխան օրի), և անոր կից սեր, անիմաստ կը գտնենք աղոնց կապակցութիւնը: Վասն զի ոչ երբեք ու և ալ կարող են քերականօրէն փոխանակել զիրար, բաց ի միջնադարեան ինչ ինչ շեղումներէ, ինչպէս «քոզ ու քոզ (քուզ), սիրոզ ու սիրթոզ» և այլն, որոց երկրորդ ձևերը հետևանքն էին սեր ձայնին յի հետ շփոթելուն:

Այսպէս նաև բնաւ կազմախօսական համեմատութիւն չկայ երևանեան «բացված ու բացուած, կազմվիլ ու կազմուծվուծ» և այլ նման գրութեանց մէջ. և «լեզուն և բազմալեզվյան» այնքան աղերս ունին իրարու հետ՝ որքան հայերէնը ՔԸԸ-դերբնի: Այս և այսպիսի փոփոխութիւնք կոպիտ և անհերքելի խանգարումներ են հայ լեզուագիտական օրինաց առջև:

Հ. Ա. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

ՊՈՒԼԵՆՈՍԻ ՎԵՐԳԻԼԻՈՍԻ ՄԱՐՈՆԻ

Հ Ո Վ Ո Ւ Ա Կ Ա Ն Ք

□ ◻ ◻ ◻

ԵՐԿՐՈՐԻ ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻԻՆ

Պ Ա Լ Ե Մ Ո Ն

Նախ բամբակէ Մեծալիսու և Դամասու Գովիւ-  
Սիրուն իրարու հետ. և սպա մրցաւք երգի, յետ  
որու վճիռ Պաւլուսի: Այս երգը դատարարէմ  
առաւ իր ամուրը. և կր իսրթուի որ Դամասոսը  
վերգելիոսմ ըլլայ, և Մեծալիսու՝ իր Յախածօրդ-  
Սիրէմ սիմ:

Մեծալիսու, Դամասու, Պաւլուս

ՄԵՆԱԿԱՍ

Այս հօտն՝ ըտէ՛ ինձ, Դամասոս, որ՞ու է,  
Մելիբէէ՞:

ԴԱՄԱՍԱՍ

Ոչ, Եգոնինն է. Եգոն

Գըշիկ մ'առաջ էր որ յառձեց զայն ինձի:

ՄԵՆԱԿԱՍ

Ո՛վ ոչխարներ, թշուառական դու միշտ հօտ,  
Մինչդեռ նա ինք կը դարպասէ Նեէրան,  
Որ մի՛ փոցէ քան զինքը զի՛ս նախիրտէ:  
Ժամը երկու անգամ հովին այս օտար  
Կը կըթէ հօտը քամելով մաքրինիր  
Եւ գողնալով գանձերէն կաթն իրենց մօր:

ԴԱՄԱՍԱՍ

Եւ սակայն այդ բաները դուն զգուշացիր  
Մեղադրելէ մարդերուն շատ խտութեամբ:  
Գիտենք թէ ո՞վ ըզքեզ... Խոչնդը ծուռ ծուռ  
Կը նայէին՝... և թէ ինչ սուրբ տեղոյ մէջ:  
Բայց ժպտեցան Յաւերժարտները ներող:

ՄԵՆԱԿԱՍ

Ժպտեցան այն առեն կարծեմ՝ երբ տեսան

1. Նախանձելով իբր թէ անոնց արժանքներուն



Որ Մեկտնի այգին, տունկերը մատաղ  
կը կտրէի ես ժանտաժուտ մանգաղով:

ԴԱՄԵՏԱՍ

կամ թէ զառամ փինիններուն քոնն հոս դուն  
Երբոր աղեղը Դահիսիսի փշրեցիր  
Ու սըլաքները, չարաշուք Մենակաս,  
Անոնց տըղուն երբ ձոն տրուիլը տեսար,  
Ու ցաւեցար, եւ թէ կերպով մ'ախոր դուն  
Զըգործէիր վընաս՝ պիտի մեռնէիր:

ՄԵՆԱԿԱՍ

Ի՞նչ ընէին տէրերն երբ լիբբ ծառաներն  
Այդ աստիճան կը յանդըզնին. վատշըւէր,  
Քեզ չըտեսայ ես երբ դաւում՝ զոգունի  
Դամոնի այծը թոցուցիր, Լիկիսկան  
Մինչ կը հաշէր ուժգին. ու երբ պոռացի  
Քէ զողը ս'ը կը խուտէ, օ՛ն, Տիտիւրէ,  
Հօտը կանչէ հաւաքէ, դուն արդէն իսկ  
Պրտուններուն ետեւն էիր՝ թաքթաքոր:

ԴԱՄԵՏԱՍ

Ան յաղթըւած երգի մէջ՝ ինձ պէտք չէ՞ր տալ  
Ածը որուն արժանացած էր սըրինգս  
Իր երգերով. գիտցիր՝ եթէ չես գիտեր  
Որ իմ էր այն այն, և Դամոնն ինք ինձի  
Զէր ժխտեր գայն, բայց կ'ըսէր չեմ կրնար տալ:

ՄԵՆԱԿԱՍ

Գոնն յաղթեցիր անոր երգի մէջ, բայց դուն  
Ե՞րբ մոմակուտ սըրինգ երբեք ունեցար.  
Տըգտես, սովոր չէիր միթէ զուհներում  
Ճըլող ծիղով խեղճուկ երգեր բըղաւել:

ԴԱՄԵՏԱՍ

Կ'ուզե՞ս արդ դուն, որ մենք կարգաւ երկուքնիս  
Մրցման էլլենք. ես կը դընեմ այս երինջն՝  
Որպէս զի մի՛ գուցէ մերժես. կը կ'թո՛ւի  
Երկու հեղ, զո՛յգ հորթի ալ կաթ՝ կը շամբէ.  
Դուն ի՛նչ գրաւով ըսէ՛ մրցիս պիտի հետս:

ՄԵՆԱԿԱՍ

Հօտես կըզակ մ'անգամ զըբաւ դընել ես  
Զեմ՝ յանդգնիր. վասըն զի հայր ունիմ տունն  
Ու ժանտ մօրու, որոնք երկուքը մէկանց  
Օրը երկու հեղ կը թըլենն ոչխարներն,  
Եւ մին՝ այծերն. իսկ ինչ որ դու իսկ ինքնին  
Պիտ՝ համարիս շատ աւելի մեծարժէք,  
Որովհետեւ անըտանալ կը հանիս,

Պիտի դընեմ երկու փինեայ բաժակներ,  
Գործ քանդակուած Ալիմեդոն ճարտարէն.  
Որոնց կողին վըբայ այգի մը ճապուկ  
կը ցանէ իր ճախարակեայ ողկոյզներն  
Ու կը ծածկէ գանոնք դունատ բաղիղով:  
Մէ՛շտեղը կան երկու դէմքեր. մին Կոնոն՝,  
Իսկ միւսը ս'ով. որ կարկինով զըծեց գունտո՛ւ  
Ա՛րբող՝ մարդոց, ս'ոն է հունձքի եղանակն  
Եւ եզողն երբ պիտի ծըռի: Ես անոնց  
Տակաւին չեմ իսկ դպցուցած իմ շրթներս,  
Այլ փակաքի տակ կը մընան պահեստի:

ԴԱՄԵՏԱՍ

Կոյն Ալիմեդ մեզ ալ իննեց զոյգ բաժակ  
Գիրք ականթով դրուագելով շուրջ անկերն,  
Որփեւս՝ մէ՛շտեղն, և անտառներն ետեւէն:  
Եւ դեռ անոնց չեմ դպցուցած իմ շրթներս,  
Այլ փակաքի տակ կը մընան պահեստի:  
Եթէ նայիս երինջիս՝ ո՛չ մէկ պատճառ  
Զըկայ որ դուն դրուատես քու բաժակներդ:

ՄԵՆԱԿԱՍ

Այսօր փախուտ չըկայ քեզի. պիտի գամ  
Ո՛ւր ալ կանչես, ան որ կու գայ՝ մեզի թող  
Մըտիկ ընէ, ահաւասիկ Պալեսմոն:  
Ա՛յնպէս ընեմ պիտի որ դուն ասկէ վերջ  
Ոչ մէկուն սիրտ ընես երգի ձայն տալու:

ԴԱՄԵՏԱՍ

Օ՛ն, ըսկըսէ՛ ուրեմն, ունիս եթէ բան.  
Իմ կողմէս ո՛չ մի յապաղում. ոչ ոքէ  
Զեմ խուսափիր. միայն դուն, ո՛վ Պալեսմոն,  
Ուշի ուշով ունկնդրէ՛ մեր երգերուն.  
Անանկ շնչին՝ անկարեւոր իր մը չէ:

ՊԱԼԵՄՈՆ

Ըսէ՛ք. զի մենք քնքուշ խոտին վրայ ահա  
Նստեր ենք. արդ կ'երկնեն արտերն համօրէն,  
Կ'երկնեն ծառերն արդ համօրէն, կը հազդի  
Տերեւ անտառն, ամենազեղ՝ արդ տարին.  
Օ՛ն ըսկըսէ՛ Դամետաս, դուն Մենալկաս  
Կըցէ՛ իրմէ՛ վերջ, փոխն ի փոխ երգեցէ՛ք,  
Փոփոխ երգերը կը սիրեն կամենայք:

1. Սամեցի մեծանուն ասպարաշիս — Միւսը՝ կը  
թուի Արատոս կամ Հեկոդոս, և կամ Արքեմիդէս:  
2. Որփեւս կամ Որփեւս որդի Ապոլոնի՝ քնարով  
անտառները կը ցաւեցընէր. գետերը կ'ոռնակառէր, և  
զագանեկը կը զգոնեցնէր:

ԴԱՄԵՏԱՍ

Ջեւսէն սկըսինք, Մուսաներ, լի է Ջեւսով  
Ամէն ինչ. ինք պտղաբերիչ դաշտերուն,  
Իրեն է հոգն ու իրնամի իմ երգերուս:

ՄԵՆԱԿԱՍ

Փերոսն<sup>1</sup> ալ զիս կը սիրէ. միշտ փերոսի  
Ունիմ՝ ձօն սարդ՝ բոսորագեղ եւ յակինթ:

ԴԱՄԵՏԱՍ

Ստահակ զստրիկը Գալատէ կը նետէ  
Ինծի խնծոր, եւ ուռեստան կը փախչի,  
Բայց կը տենչայ որ տեսնուի նախապէս:

ՄԵՆԱԿԱՍ

Իսկ Ամինտաս՝ իմ բոցըս՝ ինձ կ'երեւայ  
Ինքնայօժտար, այնպէս որ չէ Գեւիան<sup>2</sup>  
Անգամ իրեն չափ ծանօթ մէր շուներուն:

ԴԱՄԵՏԱՍ

Նըւէրներ եմ պահեր ես իմ Աստղիկիս<sup>3</sup>,  
Վասըն զի ես իսկ դիտեցի անձամբ տեղն  
Ուր բոյն են դրեր աղաւնիներն օդաշու:

ՄԵՆԱԿԱՍ

Պատանիին զրկեցի ինչ որ կըցայ,  
Տասն ոսկեգոյն խնծոր, զոր ես քաղեցի  
Վայրի ծառէն, պիտի զրկեմ նոյնչափ վաղն:

ԴԱՄԵՏԱՍ

Ո՛հ, քանի՜ հեղ եւ ի՛նչ խօսքեր ըսաւ մեզ  
Գալատէա. հովեր, դուք մաս մ'անոնցմէ  
Աստուածներուն ականջներուն հասցուցէք:

ՄԵՆԱԿԱՍ

Ամինտ, ինձ ի՛նչ օգուտ թէ չես զիս ասեր  
Սրտողդ, եթէ մինչ դուս կ'ինճեր կը վանես,  
Կ'ըլլամ ես ինքքոս պահապան վարմերուն:

ԴԱՄԵՏԱՍ

Կընած օրս է, Յուսս<sup>4</sup>, փիլիսոն ինձ զրկէ:

Եւ բերքերուն համար երկրի երբոր ես  
Երինջ մը զոհ ընեմ՝ դու ինքքոք եկուր:

ՄԵՆԱԿԱՍ

Փիլիսը ես ամենէն շատ կը սիրեմ,  
Յուսս, զի երբ հրածեշտ առի՝ արտասուեց,  
Եւ ինձ ըսաւ երկայն երկայն զնա՝ բարի,  
Գնա բարի, ո՞վ իմ գեղեցիկ Մենակաս:

ԴԱՄԵՏԱՍ

Գայլն հօտերուն է դըժպըհի, տեղտարափն՝  
Հասուն հուռձքին, եւ ծառերուն՝ պախբցին,  
Եւ մեզ համար Ամարիլի բարկութիւնն:

ՄԵՆԱԿԱՍ

Քաղցր է անձերը սերմանուած արտերուն,  
Մաթուգն հեշտին՝ կաթէ կտրած ուլերուն,  
Հապուկ ուռին՝ մաքիներուն սաղմնառիկ,  
Իսկ ինձ համար հաճոյ միայն Ամինտաս:

ԴԱՄԵՏԱՍ

Պոլլիոն մեր Մուսան՝ գեղշուկ թէպէտե՛ն  
Կը սիրէ. ձեզ կարդացողին համար, օ՛հ,  
Արածեցէք երինջ մը, ո՞վ Պիերեանք:

ՄԵՆԱԿԱՍ

Պոլլիոն<sup>5</sup> ինք կը յօրինէ նոր տաղեր,  
Արածեցէք ցուլ մ'որ վա՛ղ իսկ ըսպառնայ  
Իր եղջիւրով, ցրուէ աւազն ուղքերով:

ԴԱՄԵՏԱՍ

Թող, Պոլլիոն, սիրողը քեզ հասնի հոն  
Ուր կը հրճուի քեզ ալ հասած տեսնելով.  
Մէզր հոսի թող անոր համար, եւ անոր՝  
Դժնիկ փուշերը թող բերեն ամոմոն<sup>6</sup>:

ՄԵՆԱԿԱՍ

Թող ան որ չ'ատեր Բաիթուր<sup>7</sup> սիրէ  
Թող քու տաղերըդ, Մեւիոս, եւ նոյն ինք  
Թող աղուէսներ լըծէ, քաղերը կըթէ:

ԴԱՄԵՏԱՍ

Դուք որ ծաղիկ դեռափրթիթ կը քաղէք

1. Փերոս՝ Ազրդոն եւ արեգակն:  
2. Գեւիտ՝ Արտեմիս կամ լուսին, դիցուելի որոտց եւ  
ինամակալ շուներու: Այս Գեւիտն Մենակասի աղա-  
խիճը կը համարին սմանք:  
3. Գամետաս իր սիրուէին Առաքիկ կը կոչէ:  
4. Բարեկամ Գամետասի եւ Մենակասի, Փիլիսոն իր  
աղախիճը:

5. Զարաարախոս անուանի, պատմիչ եւ բանաստեղծ:  
6. Իսկենիկի անսակ մը որ կը բուռնի Աորիսասան,  
Հայաստան, Պոնտոս, Մարաստան:  
7. Բուսիոս եւ Մեւիոս անարուեստ քերթողներ, Քշնամի  
Վերդելեոսի եւ Որատեոսի:

Ու դեռածին ելակ՝ փախէ՛ք, մանուկներ,  
Ասկէ, խոտին տակ թաքուն օձ մը կայ ցուրտ:

ՄԵՆԱԿԱՍ

Ըզզոյ՛, մի՛ շատ առաջ երթա՛ք, ոչխարներ.  
Լաւ չէ ափին վրայ վտտահել, խոյն ինքնին  
Չորցնելու հետ է դեռ իր գեղմը խոնաւ:

ԴԱՄԵՏԱՍ

Ճարակաւոր այծերդ հեռու տար, Տիտի՛ր,  
Գետէն. Ես ինք՝ երբ ժամանակն հասնի գայ,  
Պիտի լուամ աղբիւրին մէջ մի առ մի:

ՄԵՆԱԿԱՍ

Տըզաք, խաչինքն հաւաքեցէ՛ք, տա՛քն եթէ  
Յամբքեցնէ կաթն՝ ինչպէս քիչ օր առաջ,  
Պիտի ստինքները զուր ճմլենք ափերով:

ԴԱՄԵՏԱՍ

Աւաղ, պատրաստ արօտներու մէջ ո՛րքան  
Դիհար է ցուլըս. կը հիւծէ կը մաշէ  
Մի և նոյն սէրը խաչինքներն ու հովին:

ՄԵՆԱԿԱՍ

Անոց համար պատճառն անշուշտ սէրը չէ,  
Ոսկրերն հազիւ կրնան բռնել ինքզինքնին,  
Չեմ գիտեր ինչ աչք կը թողէ զառնուկներս:

ԴԱՄԵՏԱՍ

Ո՛ր մասին մէջ՛ երկրի՛ ըսէ՛ եւ ինծի  
Պիտի ըլլաս Ապողոն մեծն, երկնքէն  
Երեք կանգուն կ'երեւայ՝ ո՛չ աւելի:

ՄԵՆԱԿԱՍ

Իրկրի ո՛ր մասն՝ ըսէ՛ կը ծնին ծաղկներն  
Արքայական անուներով դորոշըւած,  
Եւ թող փիլիսոք քեզ միայն պատկանի:

ՊԱՆԿԱՍ

Ձեր այգիսն մեծ վէճին ըլլաւ դատաւոր  
Չ'իշխար ինծի. արժանի էք երինջին  
Դուսն ալ՝ ան ալ. եւ ամէն ոք որ խիթաց  
Քաղցրը սէրէն, կամ ըմպեց իր դառնութիւնն:  
Տըզաք, ուրդերը խըցեցէ՛ք, կը բաւէ  
Որչափ մարգերն ու արօտներն ըմպեցին:

Թրգ. Հ. Ա. ՊԱՅԿԻՅԱՆ

ՈՅԼԵԻԱՅԻՔ

Պ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻՆԳՐԱՄԵԱՑ ԶՈՒԿԵԼԵԱՆԸ

1889 - 1924

Ձեռնդիղով հոս հետեւեալ յօդուածը, որ գրուած է մեծանուն գրագետիմ ՅՏամեայ Յորելեամիմ առթիւ, «ԱՂՋՄԱՎԼՊ» կը մերկայացնէ իր չեւ-մագիմ ուրախակցութիւնները, մաղթելով միամ-գամայն դեռ շատ արդիւնաւից տարիներ չայ գրականութիւնս այս ամուսնի զարգետիմ:

ԻՄՐԱԿ. ԲԱՏՄԱՎԿՊԻ

Դարձեալ գրական կեանքն է որ ցիր-ուցան հայութեան սփոփանք մը կը շնորհէ՛ համախորելով զանոնք վաստակաւոր յորուեարի մը շուրջ:

Արդի հայ գրականութեան մեծագոյն ու բազմարիւն ղէմքերէն է Պ. Արշակ Չօպանեան. անոր երեսնհինգամեայ գրական գործունէութեան յորելեանը՝ սարքուած բարեգործակ ազգայիններու յանձնախումբին կողմէն՝ արժանի վարձատրութիւն և արդար հասուցումն է տաղանդաւոր հայուն գործին:

Յորելիսական հանդէսը միանգամայն ցոյցն է ամբողջ հայութեան զնահատանքին առ Պ. Ա. Չօպանեան, և խրախոյս նորանոր ընտիր երկերու հրատարակութեան, վստահ ըլլալով՝ որ անոնք հետզհետէ պիտի ճոխացնեն ու զարդարեն հայ գրականութեան ու գեղարուեստի պատմութիւնը. և ուրախ ենք այժմէն իսկ հասատի աղբիւրէ՛ տեղեկացած ըլլալնուս, որ մօտ են լոյս տեսնելու՝ թանկագին հատորներ:

Յորելիսական յանձնախումբի կողմ խոր արձագանգ գտաւ ընդհանուր հայ մամուլէն, ամէն տեղի, Պաշտօնաթիւրթս ալ ամբողջ հայութեան հետ իր խնդակցութեան,

1. Մեկնիչները կը համարին որ այս առեղծուածը լուծուի հորի մը մէջ, շորէ մը երեսցած երկնքին մասը: — Երկրորդը յակէթ ծաղկին ըլլալ, որուն վրայ կը գտնուին Aj, Ajax = Էյաս անուան:

1. «Արշակ Չօպանեան. կենսագրական դիճեր». Գրեց Հայկազն Հապէշեան, Փարիզ 1924. էջ 28.